



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 16 » 08 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000066

Ձեռնարկողը՝

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնա» ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

«Ասբեստի թափոնների տեղադրման տեղամասի կառուցման» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գահատրման հաշվետվություն
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000066

<<16 >> 08 2019թ.

**<<Ասբեստի թափոնների տեղադրման տեղամասի կառուցման>>
աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝	<<Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս>> ՍՊԸ և <<Էմ Ջի Դիզայն>>ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ. - շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն, - նախագծային փաստաթուղթ:
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ

<<Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ>> ՓԲԸ-ն (ՔԳՀԴ), նախկինում Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը, իր կողմից շահագործվող Սպանդարյանի, Շամբի և Տաթևի ՀԷԿ-երում իրականացնում է համալիր վերազինման ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է փոխարինել ՀԷԿ-երում կիրառվող ասբեստ պարունակող հանգույցները և իրերը բնապահպանական տեսանկյունից անվտանգ համանման նյութերով: Ղեկավարվելով ասբեստ պարունակող նյութերի հետ վարվելու միջազգային լավագույն գործելակերպով, ՔԳՀԿ-ը առաջարկել է Սիսիանի համայնքապետարանին հատկացնել համապատասխան տարածք՝ բետոնե խցերում առաջացած թափոնները անվտանգ տեղադրելու համար: Սիսիանի համայնքի վարչական սահմաններում՝ համաձայն 13.03.2018թ.-ի թիվ 25-Ա ավագանու որոշման, կառուցապատման նպատակով հատկացրել է տեղամաս՝ ստորգետնյա մեկուսացված բետոնե խցերում, ասբեստ պարունակող թափոնների տեղադրման համար: Հողատարածքը գրանցված է ՀՀ պետական անշարժ գույքի կադաստրում՝ 09-006-0327-0140 ծածկագրով, որպես համայնքային սեփականություն:

Ըստ 23.06.2018թ. Սիսիան համայնքի նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) տրամադրվող հողատարածքը գտնվում է Իշխանասար խճուղու թիվ 21 հասցեում (0.1հա մակերեսով), քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում, Որոտան գետի աջակողմյան մասում, գերեզմանատնից մոտ 400.0մ հեռավորության վրա: Հողատարածքից մինչև Որոտան գետ հեռավորությունը կազմում է մոտ 320.0մ, իսկ մինչև մոտակա բնակելի տունը՝ մոտ 560.0մ: Հարավից և արևելքից հողատարածքը շրջապատված է վարելահողերով: Մոտեցման ճանապարհի



մոտ 1.0կմ հատվածը գրունտային է, որը միանում է Մ2 ավտոմայրուղուց դեպի Սիսիան քաղաք տանող ասֆալտապատ ճանապարհին: Հողատարածքը գրանցված է ՀՀ պետական անշարժ գույքի կադաստրում՝ 09-006-0327-0140 ծածկագրով, որպես համայնքային սեփականություն՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության:

Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ ասբեստ պարունակող թափոնների տեղադրման համար նախատեսվում է կառուցել թվով 10 հատ երկաթբետոնե խցեր հետևյալ հարաչափերով՝ կողմերը՝ 2.3մ x 2.3մ, բարձրությունը՝ 2.6մ: Յուրաքանչյուր բետոնե խցի հատակի հաստությունը նախատեսվում է 0.2մ, իսկ պատերի հաստությունը 0.15մ: Խցերի պատրաստման համար կիրառվող բետոնը պետք է համապատասխանի B-20 դասին: Լցվելուց հետո բետոնե խցերի վերնամասը որմնապատվելու է 0.2մ հաստությամբ B-20 դասի բետոնով, որից հետո թմբապատվելու է 1.0մ հաստությամբ տեղային գրունտով: Յուրաքանչյուր բետոնե խցի համար փորվելու է 4.3մx4.3մ կողմերով և 4.0մ խորությամբ հոր, որոնց հատակները ծածկվելու են 0.2մ հաստությամբ խճով՝ տոփանումով և բիտումային ներծծմամբ: Բետոնե խցերը հեշտ տեղափոխելու համար դրանց վերնամասին մոնտաժվելու են 16.0մմ տրամագծով 4-ական բռնակներ /խամուտներ/: Աշխատանքների ավատին նախատեսվում է ցանկապատել թափոնների տեղադրման տեղամասը՝ 2.0մ բարձրությամբ, 3.0մ թռիչքով և 5.0մմ ձողերի տրամագծով, գործարանային արտադրության մետաղական ցանկապատով:

Գրունտային ջրերից մեկուսացնելու նպատակով իրականացվելու է բետոնի հորիզոնական և ուղղաձիգ մակերեսների ջրամեկուսացում՝ երկշերտ տաք բիտումով: Փորման արդյունքում հանվող գրունտի ընդհանուր ծավալը կկազմի 740.0մ³, որից մոտ 18.5մ³-ը հողի բերրի շերտն է: Աշխատանքների իրականացման ընթացքում հանվող հողի բերրի շերտը, ինչպես նաև մնացած հողային զանգվածը՝ առանձին, հողաթմբի տեսքով պահվելու է նախատեսվող գործունեության տարածքում: Հողաթմբերը՝ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով, ծածկվելու են անջրաթափանց բրեզենտե ծածկույթով: Հանված հողը (ներառյալ հողի բերրի շերտը) օգտագործվելու է նախատեսվող աշխատանքների իրականացումից հետո՝ փոսորակների հետուցման, տարածքի հարթեցման և վերջում հողի բերրի շերտով տարածքի բարեկարգման համար: Ասբեստ պարունակող նյութերի/հանգույցների (այսուհետ՝ ԱՊՆ) ապամոնտաժումը և հեռացումը ՔԳՀԿ-ի ՀԷԿ-երից իրականացվելու է «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից, իսկ անձնակազմը՝ մինչ աշխատանքների մեկնարկը, անցնելու է մասնագիտացված ուսուցում/հրահանգավորում՝ աշխատանքների անվտանգ իրականացման մեթոդների և կանոնների վերաբերյալ:

Ապամոնտաժված ԱՊՆ-երը հաջորդաբար փաթեթավորվելու են հերմետիկ փակվող 2 պոլիէթիլենային պարկերի մեջ և պահվելու են ՀԷԿ-երում՝ հատուկ առանձնացված պահեստային տարածքներում: Նշված պոլիէթիլենային պարկերը՝ պատրաստված են ՄԱԿ-ի ստանդարտներով և նախատեսված են հատուկ ասբեստ պարունակող նյութերի պահման համար: Հերմետիկ փաթեթավորված ասբեստ պարունակող նյութերը փակ թափքով բեռնատար մեքենաներով տեղափոխվելու են դեպի թափոնների տեղադրման տեղամաս: ՀԷԿ-երում ասբեստ պարունակող թափոնների ծավալը կազմվելու է մոտ 100.0մ³, որ կզբաղեցնի նախատեսվող 10 երկաթբետոնե խուցերից /յուրաքանչյուրը մոտ 13.0մ³ (2.3մx2.3մx2.6մ) ծավալով/ առնվազն 7-ը, իսկ մնացած 3-ը կարող են օգտագործվել համայնքի կողմից: Ներկա պահին Սիսիան քաղաքում՝ համայնքի և պետական միջոցներով, իրականացվում են մի շարք հասարակական կառույցների (դպրոցներ, մանկապարտեզներ և այլն) վերակառուցման աշխատանքներ, որոնց ընթացքում՝ մասնավորապես տանիքների ասբեղիֆերային ծածկի դեմոնտաժման արդյունքում, առաջանալու են ասբեստ պարունակող նյութերի

թափոններ: Ուստի համայնքը հնարավորություն է ստանում, իր տարածքում առաջացած ԱՊՆ-ը ապահով տեղափոխել և տեղադրել դրա համար նախատեսված տեղամասում:

Աշխատանքների ավարտին առաջացած բոլոր թափոնները՝ ներառյալ աշխատանքներն իրականացնող անձնակազմի հատուկ հագուստը, կոշիկները և այլ անհատական պաշտպանության միջոցները, նույնպես հերմետիկ կփաթեթավորվեն և կտեղադրվեն երկաթբետոնե խցերի մեջ:

Բետոնե խցերում թափոնների տեղադրումը իրականացվելու է շինարարական աշխատանքներից հետո, ծածկվելու են երկաթբետոնե կափարիչներով և զմռսվելու են: Դատարկ բետոնե խցերը՝ մինչև շահագործման հանձնվելը, ծածկվելու են երկաթբետոնե կափարիչներով: Ասբեստի թափոնների տեղադրման տեղամասի կազմակերպման և դրանում երկաթբետոնե խցերի տեղադրման աշխատանքների իրականացումը, ըստ նախնական գնահատումների, կպահանջի մոտ 1 ամիս:

Մինչև նախատեսված տարբերակի ընտրությունը, դիտարկվել են նախատեսվող գործունեության հետևյալ այլընտրանքները.

- ասբեստ պարունակող թափոնների տեղադրումը համայնքային աղբավայրում,
- ասբեստ պարունակող թափոնների փոխադրումը և վնասագերծումը այլ երկրներում:

Վերլուծելով նախատեսվող գործունեության իրականացման բոլոր տարբերակները, ընտրվել է բնապահպանական տեսանկյունից ընդունելի և տեխնիկապես իրագործելի ամենանպատակահարմար տարբերակը՝ Սիսիան համայնքի վարչական սահմաններում կառուցել ասբեստ պարունակող թափոնների տեղադրման տեղամաս: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ջրցանի ջուրը մատակարարվելու է Սիսիան քաղաքից: Աշխատողների սանիտարահիգիենիկ կարիքները հոգալու համար նախատեսվող գործունեությանը մոտ, կապալառուն վարձելու է սեփական տուն, որը կահավորված կլինի լոգարանով, զուգարանով և սննդի ընդունման սենյակով:

Շինարարության փուլում՝ աշխատանքների իրացման ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակը շինարարական աղբն է՝ մոտ 35.1տ քանակությամբ, և կենցաղային աղբը: Շինարարական և կենցաղային աղբը հավաքվելու են իրարից առանձին և կհեռացվեն տարածքից դեպի քաղաքային աղբավայր՝ համայնքի աղբահանող կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն:

Շինարարության ընթացքում կիրառվող նյութերը մատակարարվելու են Սիսիան քաղաքի մասնագիտացած շինարարական բազաներից՝ անմիջապես օգտագործումից առաջ: Նախատեսվող գործունեության տարածքում նավթամթերք չի պահվելու, քանի որ շահագործվող տեխնիկան և տրանսպորտը լիցքավորվելու են մոտակա բենզալցակայանից: Փոշի առաջացնող նյութերը մինչև օգտագործումը, ինչպես նաև անբարենպաստ մթնոլորտային պայմանների դեպքում, ծածկվելու են բրեզենտով կամ ՊՎՔ թաղանթով: Ասբեստի թափոնների տեղադրման տեղամասի շահագործման փուլում թափոններ չեն առաջանալու:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում),
- հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակահատվածում, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները: Նախատեսվող աշխատանքները կուղեկցվեն կիրառվող շինարարական տեխնիկայի աղմուկով, ինչը

կհանգեցնի տարածքում և մոտակա շրջակայքում աղմուկի ֆոնային մակարդակի որոշակի բարձրացմանը, սակայն, աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակների գերազանցում չի ակնկալվում: Նախատեսվող գործունեության հարևանությամբ չկան որևէ զգայուն ազդակիրներ (մոտակա բնակելի տունը մոտ 560.0մ հեռավորության վրա է), ինչպես նաև շինարարական աշխատանքները կարճաժամկետ են, կատարվելու են օրվա ցերեկային ժամերին: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, ինչպես նաև բնապահպանական և աշխատանքի անվտանգության մշտադիտարկման ծրագրեր: Բնապահպանական միջոցառումների վերահսկողություն իրականացնելու է պատվրատուն, իսկ մոնիթորինգի պատասխանատու կատարողը՝ Սիսյան համայնքը պատվիրատուի աջակցությամբ:

Վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը և ՇՄԱԳ հաշվետվությունը, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, գնահատման և փորձաքննության փուլերում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, առողջապահության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կարծիքները, կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային: Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հաշվետվության՝ լուծված են աշխատանքի անվտանգության, արտակարգ իրավիճակների պատրաստվածության, կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության, աղմուկի նվազեցման, տարածքի բարեկարգման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ: Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի մակերեսը, մշակված բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջոցառումները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կլինի կարճատև և նվազագույն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Փորձաքննական պահանջներ

1. Շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախագծային փաստաթղթերում և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների, ինչպես նաև բնապահպանական և աշխատանքի անվտանգության մշտադիտարկման ծրագրերի պահանջներին:

2. Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգի արդյունքները, հետոնախագծային վերլուծության ծրագիր պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար: Մոնիթորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝



պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Ասբեստի թափոնների տեղադրման տեղամասի կառուցման>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան